ԿԱՐԾԻՔ
«Զվարթնոց» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի նոր ցուցադրության գիտական պլանի մասին

Նախ կցանկանայի ողջունել թանգարանի աշխատակիցներին նոր ցուցադրության գիտական պլանի կազմման և թանգարանի նոր շինության կառուցման առնչությամբ, ինչը հնարավոր դարձավ «Լինսի» հիմնադրամի տրամադրած միջոցների շնորհիվ:

Ցուցադրության պլանը կազմված է բավականին ընդարձակ, այն է՝ նրանում, իմ կարծիքով, տեղ են գտել որոշ ենթաթեմաներ, որոնք այնքան էլ անհրաժեշտ չեն Զվարթնոցին նվիրված ցուցադրությունում ներառելու համար: Այսպես, ես կառաջարկեի հրաժարվել «Ներածություն» և «Հայկական ճարտարապետության զարգացման նախազվարթնոցյան փուլերը» ենթաթեմաներից այն կերպ, ինչպես որ դրանք առաջարկված են, մանավանդ որ վերջինս ոչ մի էական տեղեկատվություն չի հաղորդում անմիջականորեն «նախազվարթնոցյան» հանդիսացող ճարտարապետական ձևերի մասին: Որպես ներածություն արդեն իսկ բավականին ինֆորմատիվ է «Զվարթնոցի առաջին պեղումները (փուլեր), նյութական մշակույթը, հուշարձանի կառուցողական արվեստն ու ճարտարապետությունը» ենթաթեման:

Ընդհանրապես, կառաջարկեի հնարավորինս թեթևացնել այն բաժինները, որոնք առանձնապես նոր բան չեն ավելացնում Զվարթնոցի՝ որպես ճարտարապետական կոթողի բազմակողմանի ցուցադրությանը և մեկնաբանմանը: Այսպես, հենց վերջին հիշատակված բաժնում առաջարկվում է ցուցադրել շուրջ 30 լուսանկար, մի շարք, իմ կարծիքով ավելորդ կարծիքներ (օրինակ, արք. Ալեքսի, գրականագետ Ուկ-ռահինցև, Սպ. Սպանդարյան, Հ. Սաղաթելյան, Սուքիաս արք. Պարզյանց, Ս. Լուկաշին, Հ. Սեմաշկո). չէ՞ որ այս ամենը մակերես է զբաղեցնում: Նույն մոտեցմամբ կառաջար-կեի թեթևացնել «Քարի մշակություն», «Խեցեգործություն», «Մետաղագործություն» բաժինները:

Ցուցադրության մեխը, իմ կարծիքով, «Տաճարի կառուցվածքաբանական, ծավալատարածական համակարգը ըստ հայ և օտարազգի ուսումնասիրողների» բաժինն է: Այս հատվածի ինձ վերաբերող մասում նպատակահարմար եմ գտնում ավելացնել նաև «Զվարթնոցի հնարավոր ճակատ, կազմված Թորամանյանի նախագծի, Փարիզի Սեն-Շապելի հարթաքանդակի և Գագկաշենի մոդելի հիման վրա» գծագիրը, ինչպես նաև տաճարի կառուցողական արվեստին առնչվող այլ գծագրեր, ինչի շնոր-

հիվ ցուցադրության այս բաժինը իմ կարծիքով կդառնար գիտականորեն ավելի հիմնավորված:

Ինձ համար անհասկանալի է Ն. Տոկարսկու և Ան. Յակոբսոնի կողմից հեղինակած Զվարթնոցի հատակագծերի ներկայացումը, մանավանդ որ դրանք կրկնում են թորամանյանականը: Ինձ հայտնի չէ, արդյո՞ք նույնություններ չեն Վ. Հարությու-նյանի հեղինակած «Տաճարի գլխավոր հատակագիծը» և Ստ. Մնացականյանի ներկայացրած «Ճարտարապետական համակառույցի ընդհանուր հատակագիծը» գծագիրը: Գուցե ավելի նպատակահարմար է Զվարթնոցի վերակազմության ժամանակագրորեն առաջնային փորձերը տանել առաջ, այլ ոչ ներկայացնել վերակազմությունների շարքի վերջում:

Անհասկանալի է նաև, թե ինչու՞ են «պատվիրվում» Ստ. Մնացականյանի գրքում տեղ գտած Զվարթնոցի առանձին էլեմենտների լուսանկարների կրկնօրինակ-ները, եթե դրանք կարելի է կրկին լուսանկարել տեղում (տե՛ս «Տաճարի գեղազարդ-ման արվեստը, մշակութային փոխառությունները» բաժինը):

«Զվարթնոցի դերը հայ ճարտարապետության զարգացման գործում: զվարթնոցատիպ հուշարձաններ» բաժնում առկա են որոշ սխալներ: Նախ, Տայքի Իշխան տաճարի զվարթնոցատիպ լինելը հիմնավոր չէ անհրաժեշտ փաստերի բացակայության պատճառով, Լեկիթի բոլորակ տաճարի վերակազմության մնացականյանական տարբերակը ընդունելի չէ (այդ մասին մանրամասն տե՛ս իմ հոդվածը. «Լեկիթի բոլորակ տաճարը» - «Հանդէս Ամսօրեայ», 2001, էջ 281-351), առաջարկում եմ ցուցադրել նաև Բանակ տաճարի վերակազմության իմ առաջարկած տարբերակը (ես ունեմ այդ հարցին նվիրված մի շարք հոդվածներ, բաժիններ իմ մենագրություններում): Առաջարկում եմ ոչ թե պատվիրել Գագիկ թագավորի արձանի՝ Գագկաշենի մոդելը ձեռքին լուսանկարը, այլ լուսանկարել այն Հայաստանի պատմության պետական թանգարանի ցուցադրությունում տեղադրվածից:

Ես առաջարկում եմ այս վերջին դիտարկվող բաժինը վերանվանել «Զվարթնոցի նախօրինակները և զվարթնոցատիպ կառույցներ» և այստեղ դիտարկել նաև Սան-Լորենցոն, ապա Բոսրան, Սելևկիան և, հատկապես, Ապամեան: Զվարթնոցին անմիջական նախորդողները այս չորսն են, որոնցում ներքին կենտրոնական խաչաձևը առնված է շրջանց սրահի մեջ: Ապամեա եկեղեցին, նրա վերաբերյալ նախորդները անկասկած եղել են նախօրինակներ մեր Զվարթնոցի համար: Զվարթնոց կառուցողը չի կրկնել նախօրինակին, այլ ստեղծել է նրանց զարգացումը, նրանց կատարյալը, նրանց ավարտականը մեկ դար անց՝ նոր ժամանակներում (այս մասին տե՛ս հանրա-

պետական ծառայության պետ Սերժիկ Առաքելյանին և ճարտարապետ Մերի Դանիել-յանին փոխանցած իմ դեռևս անտիպ «Զվարթնոց. վիճարկվող հարցերի շուրջ» շուրջ 30 էջանոց գրությունը):

Պլանի էջ 20-ում հղվում է իմ «Զվարթնոց» (1963) աշխատության էջ 152-ը որպես Ադրիանի Ստոյա և Պերուշչիցա կառույցների սկզբնաղբյուր, մինչդեռ նման բան չկա իմ այդ գրքում:

Այս նույն բաժնում ես կառաջարկեի օգտագործել Ալեքսանդր Մանուչարյանի «Զվարթնոցի հարցի շուրջ» հոդվածի («Պատմա-բանասիրական հանդես», 1988, թիվ 2, էջ 187-200) բավականին շահեկան տվյալները Արևմտյան Եվրոպայում զվարթնո-ցատիպ կառույցի մասին:

Առաջարկում եմ անդրադարձ կատարել նաև Զվարթնոցի կործանման պատճառ-ներին, հաշվի առնելով մանավանդ այն հանգամանքը, որ ոչ քիչ թվով ուսումնասի-րողներ զվարթնոցատիպ կառույցները համարում են ոչ ամուր, կառուցվածքային թե-րություններ ունեցող ու այդ գիտնականների շնորհիվ այդ կարծիքը տարածվել է նաև ժողովրդի մեջ: Այս առիթով խորհուրդ կտայի անդրադառնալ հետևյալ հոդվածներին. (ա) П, руз н СхАҳ Матевос н АхСҳ Шахсувар н ЛхВҳ *Храм Звартноц: пр, ч, ны , врем разрушен,* х- «Պատմա-բանասիրական հանդես», 1984, N 3, էջ 189-194, (բ) Սարգսյան Հ. Գ., Թամանյան Յու. Ա., *Հայկական պատմական կառույց-ների սեյսմակայունության զարգացման հարցի շուրջը*, Պատմա-բանասիրական հան-դես, 1970, թիվ 1, էջ 212-219, նաև Մարության Տ. Հ., *Հարատևող թյուրիմացություն*, «Գարուն», 1998, թիվ 2, էջ 39-41:

Այցելուները՝ հայաստանցի թե արտասահմանցի, անպայման հետաքրքրվելու են Զվարթնոցի վերականգնման հարցերով, մինչդեռ այս մասին ևս ոչինչ չի նախատես-վում ցուցադրության պլանով: Այս հարցի շուրջ առաջարկում եմ ծանոթանալ և նյութ քաղել հետևյալ հոդվածներից. Մարության Տ. Հ., *Զվարթնոցի վերականգնման հարցի շուրջը*, «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1987, թիվ 1, էջ 24-29, Մարության Տ. Հ., *Կիսավեր պատեր ավերակի փոխարեն* [Զվարթնոցի մասնակի վերականգնման վերաբերյալ], «Գրական թերթ», 1988, օգոստոսի 12, Մարության Տ. Հ., *Զվարթնոցի ոդիսականը*, «Գրական թերթ», 1989, հոկտեմբերի 6, Մարության Տ. Հ., *Ռեցիդի՞վ… այո՛*, «Հայաստանի հանրապետություն», 1993, նոյեմբերի 3, ինչպես նաև վերոնշյալ «Զվարթնոց. վիճարկվող հարցերի շուրջ» աշխատության վերջին էջերից:

«Զվարթնոցը հայ ուսումնասիրողների աշխատություններում» բաժնի շուրջ ունեմ որոշ առարկություններ: Ինձ հասկանալի չէ այս բաժնում ներկայացվող ցուցանմուշների ընտրության սկզբունքը. եթե ցուցադրվում են ուսումնասիրողների

մենագրությունները, ուրեմն թող լինի այդպես, իսկ եթե ցուցադրվում են նաև հոդվածների բնօրինակները կամ պատճենները, ապա ինչու՞ ներկայացված չեն զվարթնոցագիտության շուրջ իմ (նաև այլ զվարթնոցագետների) համապատասխան աշխատությունները, որոնց ցանկը հայտնի էր Ս. Առաքելյանին և Մ. Դանիելյանին ամիսներ առաջ: Նկատեմ, որ միայն մենագրություններ ցուցադրելու սկզբունքով առաջանալու դեպքում պետք է ներկայացվի նաև իմ «Տայքի ճարտարապետական հուշարձաններ» աշխատությունը, որի էջ 35-88-ը (ավելի քան 50 էջ) նվիրված են Բանակին և այլ զվարթնոցատիպ տաճարներին, «Հայ ճարտաարպետության հուշարձաններ. Խորագույն Հայք» աշխատությունը, որի էջ 34-103-ը (շուրջ 70 էջ) նույնպես վերաբերում են նշյալ թեմատիկային, «Арх, тектурные пам тн, к, : Звартноц, Аван, Собор Ан, йской богоматер, xxx» աշխատությունը, որի էջ 8-48-ը և 167-203-ը համապատասխանաբար նվիրված են Զվարթնոցին և Բանակին (շուրջ 75 էջ): Ես հատուկ եմ շեշտում էջերի քանակը, որպեսզի ցուցադրության պլանը կազմողների մոտ հարցեր չառաջանան: Ինչ վերաբերում է Զվարթնոցին առնչվող հոդվածներին, ապա դրանց թիվը 15-ն է, ևս 9 հոդված լույս է տեսել պարբերական մամուլում: Ցուցադրության ներկա պլանի այս մասով ստացվում է, որ մենք ունենք ընդամենը մեկ խոշոր և բազմաբեղուն գրիչ ունեցող զվարթնոցագետ, մինչդեռ մյուս-ները ներկայացված են մեկական հրատարակությամբ: Կրկնում եմ, որ ես հակված չեմ և չեմ պահանջում ցուցադրության մեջ ներառել իմ կամ մյուս զվարթնոցագետ-ների բոլոր աշխատությունները, պարզապես հարկ եմ համարում, որ անշեղորեն կիրառվի մեկ սկզբունք բոլոր հետազոտողների համար:

Նաև նկատեմ, որ ճիշտ չէ Հովհաննես Խաչատուրի Խալփախչյանին բնութագրել որպես «ճարտարապետ-նկարիչ». նա ճարտարապետության պատմաբան էր, դոկ-տոր, ավելի քան 250 հետազոտությունների ու գիտական հոդվածների հեղինակ:

Տիրան Մարության

ճարտարապետության դոկտոր,
Հայաստանի վաստակավոր շինարար

14 հունիսի 2003 թ.